«Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ

Հոդված 5. Վարչապետին ենթակա մարմինները

1. Վարչապետին ենթակա մարմինները գործում են ազգային անվտանգության~~, ոստիկանության~~ և պետական վերահսկողության ոլորտներում:

2. Վարչապետին ենթակա մարմիններն են՝

1) Ազգային անվտանգության ծառայությունը.

~~2) Ոստիկանությունը.~~

3) Պետական վերահսկողական ծառայությունը

Հոդված 6. Նախարարությանը ենթակա մարմինը

1. Նախարարությանը ենթակա մարմինը գործում է նախարարությանը վերապահված գործունեության ոլորտի շրջանակներում և ապահովում է նախարարության իրավասությանը վերապահված գործունեության ոլորտի առանձին ուղղությունների իրականացումը:

2. Նախարարությանը ենթակա մարմիններն են՝

1) Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը.

2) Քրեակատարողական ծառայությունը.

3) Պրոբացիայի ծառայությունը.

4) Փրկարար ծառայությունը.

5) Սոցիալական ապահովության ծառայությունը.

6) Պետական արարողակարգի ծառայությունը.

7) ~~Միգրացիոն ծառայությունը~~Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը.

8) Զրային կոմիտեն.

9) Գիտության կոմիտեն.

10) Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն.

11) Զբոսաշրջության կոմիտեն.

12) Զինված ուժերի գլխավոր շտաբը.

13) Ռազմարդյունաբերության կոմիտեն.

14) Պետական գույքի կառավարման կոմիտեն.

15) Բարձրագույն որակավորման կոմիտեն.

16) Անտառային կոմիտեն.

17) Լեզվի կոմիտեն.

18) գնումների հետ կապված բողոքներ քննող անձինք

19) Ոստիկանությունը.

20) Ոստիկանության գորքերը: